

ԿԱՐԾԻՔ

**ԷԼԵՆ ՍԱՄՎԵԼԻ ԱՎԵՏԻՍՅԱՆԻ «ԱՎԱԳ ԴՊՐՈՑԱԿԱՆԻ ՀԱՆՐԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ
ԿՈՄՊԵՏԵՆՑԻԱՅԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆ ԱՆԳԼԵՐԵՆԻ
ՈՒՍՈՒՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ» ԽՈՐԱԳՐՈՎ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ՝ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԹԵԿՆԱԾՈՒԻ ԳԻՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՀԱՅՑՄԱՆ՝ «ԺԳ.00.02 ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԵՎ
ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱ (ԱՆԳԼԵՐԵՆ ԼԵԶՈՒ)» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ**

Օտար լեզուների ուսուցումը և դասավանդումն օրեցօր աճող նշանակություն են ձեռք բերում ժամանակակից աշխարհում գրանցվող գլոբալացման աննախադեպ միտման և միջմշակութային հաղորդակցության բարձր ինտենսիվության պայմաններում: Հետևաբար, փոխվում են օտար լեզուների, մասնավորապես անգլերենի դասավանդման հանդեպ ներկայացվող պահանջները թե՛ հանրակրթական, թե՛ բուհական համակարգերում: Այս առումով ատենախոսի մտահոգությունն է դարձել անգլերենի ուսուցման գործընթացում ավագ դպրոցականի հանրամշակութային կոմպետենցիայի զարգացման հիմնախնդրի ուսումնասիրությունը:

Ատենախոսության մեջ համարժեք են ներկայացված հետազոտության արդիականությունը, վարկածն ու առարկան: Հետազոտության նպատակի ձևակերպումը համապատասխանում է թեմայի արդիականությանը՝ հաշվի առնելով հետազոտության հիմնախնդրի էությունը: Հետազոտության ընթացքը տրամաբանորեն կապակցված է՝ հիմնախնդրին վերաբերող պատճառահետևանքային կապերի և կարևորագույն գործոնների գիտամեթոդական հաշվառմամբ: Հետազոտության արդիականության, նպատակի և առարկայի հստակ ձևակերպումը հայցորդին հնարավորություն է ընձեռել՝

- ուսումնասիրել ուսուցողական նպատակով գործաբանական տեքստերի ընտրության սկզբունքները
- քննության առնել «հանրամշակութային կոմպետենցիա» հասկացությունը, ինչպես նաև հանրամշակութային փոխներթափանցման հաղթահարման առանձնահատկությունները

- դիտարկել սովորողների հանրամշակութային կոմպետենցիայի ձևավորման և զարգացման առանձնահատկությունները
- մշակել վարժությունների համակարգ՝ նպատակաուղղված սովորողների լեզվահաղորդակցական, գործաբանական, հանրամշակութային կարողությունների զարգացմանը
- գիտափորձով ապացուցել ներկայացված մեթոդական համակարգի արդյունավետությունը:

Աշխատանքի 161 էջում ամփոփված են ներածությունը, երկու գլուխ, եզրակացություն, գրականության ցանկ և հավելված:

Առաջին գլխում քննության են առնվում ավագ դպրոցականների հանրամշակութային կոմպետենցիայի ձևավորման բովանդակային և գործառական առանձնահատկությունները: Դիտարկելով լեզու-մշակույթ կապը, ինչպես նաև հանրամշակութային կոմպետենցիայի հիմնական բաղադրիչները՝ (ճանաչողական, արժեքային, անձնային-գործառնական, գնահատողական-ռեֆլեքսիվ, հայեցակարգային) հետազոտողը իրավամբ կարևորում է գրական-գեղարվեստական բնագիր տեքստերի նշանակությունը որպես սովորողների հանրամշակութային կոմպետենցիայի ձևավորման ու զարգացման միջոց: Պայմանավորված թեմայով՝ աշխատանքում հետազոտողը շեշտում է նաև մշակութաբանական բնագրային տեքստերը և դրանց չափանիշները (մատչելիություն, տեղեկացվածություն, գեղարվեստական և գրական արժեք, բովանդակային և կառուցվածքային ամբողջականություն և այլն) և հանրամշակութային նշանակությունը: Հեղինակն իրավացիորեն եզրահանգում է, որ գրական տեքստը եղել և մնում է մշակութային, հանրամշակութային, միջմշակութային կոմպետենցիայի ձևավորման ու զարգացման արդյունավետ միջոց՝ ամենից առաջ շեշտելով այդ տեքստերի ճանաչողական արժեքը: Արդյունքում՝ զարգանում է նաև սովորողների ընդհանուր լեզվահաղորդակցական կոմպետենցիան: Բնականաբար, հեղինակը ուսուցման գործընթացում կարևորում է ուսուցման հաղորդակցական-ճանաչողական, փոխներգործուն, հուզական և մեկնաբանող ռազմավարությունները: Սույն գլխում է. Ավետիսյանն անդրադառնում է նաև սովորողների հաղորդակցական ծախողումների հաղթահարման հիմնախնդրի քննությանը՝ հատկանշելով «հանրամշակութային սխալ» հասկացությունը՝ որպես աշխարհի հանրամշակութային ընկալման տարբերությունների արդյունք կամ

միջմշակութային փոխներթափանցում: Հետազոտողն օբյեկտիվ եզրահանգում է հանրամշակութային սխալները հիմնականում հանրամշակութային կոմպետենցիայի ոչ բավարար ձևավորվածության հետևանք են, իսկ ընդհանրապես լեզվահաղորդակցական ձախողումները կարող են ունենալ և՛ լեզվական, և՛ մշակութային, և՛ իրադրային պատճառներ:

Ատենախոսության երկրորդ գլխում հետազոտողը ներկայացնում է իր կողմից մշակված հանրամշակութային կոմպետենցիայի ձևավորման և զարգացման մեթոդական համակարգը և դրա արդյունավետության փորձարարական հիմնավորումը: Ատենախոսն ընդհանուր գծերով դիտարկում է անգլերենի հանրամշակութային լեզվանյութի ուսուցման ռազմավարությունները՝ կարևորելով մասնավորապես հանրամշակութային լակունաների և իրակությունների իմաստի բացահայտմանն ու ուսուցմանը վերաբերող խնդիրները: Հատկապես հեղինակը հատկանշում է տեքստից դեպի լակունա և լակունայից դեպի տեքստ ռազմավարությունները, հուզագգայական ռազմավարությունները: Ատենախոսն անդրադառնում է նաև ՀՀ ավագ դպրոցում անգլերենի դասագրքերի հանրամշակութային բաղադրիչին: Պարզ է դառնում, որ դրանցում զետեղված տեքստերն ադապտացված են դիդակտիկական մատչելիության սկզբունքով: Ատենախոսը հետազոտությունն ամբողջական դարձնելու նպատակով ներկայացնում է սովորողների հանրամշակութային կոմպետենցիայի զարգացմանը նպատակաուղղված վարժությունների համակարգ՝ համապատասխան վերլուծություններով ու եզրահանգումներով:

Հետազոտության հիմնական դրույթներն արտացոլված են սեղմագրում նշված հրապարակումներում:

Դրական գնահատելով էլեն Սամվելի Ավետիսյանի աշխատանքը՝ կցանկանայինք նշել մեր դիտարկումներն ու առաջարկությունները.

1. Հետազոտության մեջ անդրադառնալով բնագիր տեքստերի ընտրությանը, լավ կլիներ, որ հեղինակը դրանց ընտրության սկզբունքները դիտարկելիս հաշվի առներ մի շարք լեզվական և արտալեզվական գործոններ, օրինակ, ավագ դպրոցականների լեզվահաղորդակցական կարողությունների մակարդակը, նրանց տարիքային հետաքրքրությունները, նախասիրությունները, ճաշակը, հոգեբանական, մանկավարժական այլ գործոններ:

